

լիսեանէ : Ոճիրը տեղի կ'ունենայ Գաղէի փանքին խոր ձորին մէջ : Վարազ Տրդատին կինը կը ճողոպրի եւ կ'ապաստանի Խաչենի բերդը՝ իր զստեր հետ, որ յետոյ կ'ամուսնանայ Սահլի որդւոյն՝ Ատրներսեհի հետ :

Օրբէլեան քիչ մը կը լուսարանէ Վարազ Տրդատի Ստեփաննոսեան կոչումը, ըսելով. «Ք սոյն ամի եւ Տէր Ներսէհ Սիւնի՝ որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ-Տրդատ՝ որդի Ստեփաննոսի՝ Աղվանից իշխանի, եւ զորդին եւս ի դող մօրն սատակէ. եւ զամենայն ինչս նորա յաւարի առնու : Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէն էր, որ ունէր գեապճական տէրութիւնն Աղվանից » (էջ 158-9) : Միհրական այս Վարազ Տրդատի հօր Ստեփաննոս կոչուիլը չի համապատասխաներ Կաղանկատուացիի, որ Վարազման Բ. ի որդի կը նշանակէ Վարազ Տրդատը : Գուցէ Վարազման Բ. ունէր երկրորդ անուն մըն ալ՝ Ստեփաննոս : Աղուանից այս գերդաստանը յաճախ ունէր երկու անուն, ինչպէս Սահակ-Սեւադա, Յովհաննէս-Սենեքերիմ :

Վարազ Տրդատ Ստեփաննոսեան այսպէս կը յիշուի ունեցած ըլլալ որդի մը՝ Ստեփաննոս, որ մօր զրկին մէջ կը սպաննուի Տէր Ներսէհ Փիլիպպեանէ, երբ վերջինս ինչ որ զինախնդրութեամբ կը սպաննէր նոյն պահուն մանկիկին հայրը՝ Վարազ Տրդատը : Վարազ Տրդատի կը յիշուի երկրորդ որդի մը՝ Վարազման Գ., որ Կուր գետին մէջ կը կորսուի : Վերջապէս երրորդ որդի մը՝ Զուանչերիկ : Կը յիշուի նաեւ Սպրամ դուստր մը, որ կ'ամուսնանայ Սահլի Սմբատեանի որդի Ատրներսեհի հետ : Հուսկ Օրբէլեան կը յիշէ Վարազ Տրդատի երկրորդ դուստր մը. «Էր դուստր մի Վարազ-Տրդատայ՝ Աղվանից գահակէց իշխանի, որոյ անուն Շահանդուխտ, եւ ունէր պատկեր նոր եւ օտար. եւ գեղ նորա յոյժ չքնաղ եւ դարմացուցիչ տեսողաց. որ եւ ոչ ումեք նիւթեղէն կարծիր. այլ իրբ ի լուսատարբ օղոյ

եւ յանօր շողից կերպացեալ : Որ եւ խընդրեցին հարս ի տանէ Թորգոմեան : Եւ ելնա յաշխարհէն իւրմէ ի հայրենի տանէ. եւ զնայր ի կնութիւն հայկազուն իշխանացն. եւ մտեալ ի Բաղաց սահմանն՝ երթայր ի ճանապարհ » (էջ 163-4) : Շահանդուխտի եւ իր խումբը յարձակման կ'ենթարկուին պարսիկ ասպատակներէ, որոնք զեղուհին առեւանդելու համար դարանակալ կը սպասէին : Շահանդուխտ՝ քաջութեան շնորհիւ կ'ազատի եւ կուսակրօնութեան կը նուիրուի :

Արդ, Արլասաղ Աղուանից իշխանը, որ Բարակին զինակցեցաւ Բաղասական եւ Գեղարքունեաց աւերման եւ կոտորածին, յայտնի չէ թէ Վարազ Տրդատ Ստեփաննոսեանի զերդաստանին ո՛ր ճիւղին կը պատկանէր : Տեսնաք որ Կաղանկատուացիի վկայութեամբ 276 Հայոց կամ Քրիստոսի 827ին տեղի ունեցաւ այս դաւառներուն կոտորածը : Արլասաղ ողջ էր այդ ատեն եւ մինչեւ 830-1 թուականը, երբ երկու ասպտամբներ՝ Դաւոյ եւ Շապուհ կ'ապրտամբին Բարակի դէմ, որոնց Կաղանկատուացի դաւաճանողք ի սէր եւ ի լսազաղութիւն, կ'անուանէ, սպանին զՍտեփաննոս զկոչեցեալն Արլասաղ իրր զործակից եւ զինակից Բարակին : Հաւանաբար ասկէ ոչ շատ վերջ գալանդոսն Արլասաղայ կայեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին : Այսինքն անոնք որ Արլասաղը սպաննած էին՝ իրենց կարգին սպաննուեցան Արլասաղի մերձաւորներէն, Ստեփաննոսեաններէն :

Արլասաղի մահէն վերջ իր տեղ իշխանութիւնը ձեռք առաւ իր քեռորդին՝ Եսայի անուանեալ Արու Մուսէ :

Կարելի է խորհիլ որ Վարազ Տրդատի վերջին եւ ողջ մնացած որդին՝ Զուանչերիկ ունէր նաեւ երկրորդ անուն մը՝ Արլասաղ, եւ Վարազ Տրդատի սպանութեանէն վերջ իր հօր տեղ իշխանութեան գլուխը անցաւ : Հաւանաբար իր հօր վրէժը լուծելու համար զինակցեցաւ Բարակին եւ մասնակցեցաւ Բաղասականի եւ Գե-